Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 352

վարչական վարույթը վերսկսելու և

վարչական տույժ նշանակելու մասին

23 դեկտեմբերի 2021թ. ք.Գյումրի

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Հյուսիսային մաքսատուն-վարչության պետ Հայկ Միրզոյանս, քննելով Վրաստանի Հանրապետության քաղաքացի Աշոտ Աբրամյանի (անձնագիր՝ 11BA12355, ծնվ.՝ 15.07.1990թ., հասցե՝ Վրաստանի Հանրապետություն, ք.Ախալքալաք, Ջավախաշվիլի 10) կողմից մաքսային կանոնների խախտում կատարելու վերաբերյալ նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Աշոտ Աբրամյանի անվամբ 05100022/240819/0000482305 մաքսային մուտքի օրդերով 365 օր ժամկետով՝ մինչև 23.08.2020թ., (այնուհետև, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 05.04.2021թ. թիվ 25 որոշման համաձայն այն երկարաձգվել է մինչև 30.09.2021թ.) Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել OPEL VECTRA մակնիշի, AX687XA պետհամարանիշի, W0L0JBF35W1184567 նույնացման համարի, 1998 թվականի արտադրության ավտոմեքենա: Սահմանված ժամկետում նշված ավտոմեքենան չի արտահանվել, որի արդյունքում խախտվել է հետադարձ արտահանման պարտավորությունը:

ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի մաքսային կետ-բաժնի պետի տեղակալի կողմից 05.10.2021 թվականին Աշոտ Աբրամյանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներով: Գործի քննությունը նշանակվել է 2021թ. նոյեմբերի 22-ին, ժամը 14:00-ին:

ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչության պետի 22.11.2021թ. որոշմամբ Աշոտ Աբրամյանի վերաբերյալ հարուցված վարչական գործի վարույթը կասեցվել է:

Աշոտ Աբրամյանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթի քննությունը նշանակվել է 23.12.2021թ.-ին ժամը 12:30-ին, որի մասին վերջինս պատշաճ ծանուցվել է:

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 281-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակվում է՝ մինչև ժամանակավոր ներմուծման ժամկետը լրանալը ժամանակավոր ներմուծված ապրանքները սույն Օրենսգրքով նախատեսվող կարգով և պայմաններով «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելը կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ:

Աշոտ Աբրամյանը պատշաճ ծանուցված լինելով գործի քննության տեղի և ժամանակի մասին, գործի քննությանը չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել:


Աշոտ Աբրամյանի անվամբ թիվ 05100022/240819/0000482305 մաքսային մուտքի օրդերով հայտարարագրված տրանսպորտային միջոցը սահմանված ժամկետի ավարտին հաջորդ օրվա՝ 01.10.2021թ. դրությամբ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով հայտարարագրելու դեպքում կառաջանան մաքսային վճարներ՝ ընդհանուր 3.537.009 ՀՀ դրամի չափով (հիմք՝ 14.10.2021թ. թիվ 592 զեկուցագիր):

Այսպիսով, վարույթի նյութերով հիմնավորվում է, որ Աշոտ Աբրամյանը սահմանված ժամկետում չի արտահանել 05100022/240819/0000482305 մաքսային մուտքի օրդերով ՀՀ ներմուծված ավտոմեքենան, ինչով պայմանավորված՝ թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ, 206-րդ, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 32-րդ և 234-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Աշոտ Աբրամյանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթը վերսկսել:
2. ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու համար Աշոտ Աբրամյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանելով 3.537.009 ՀՀ դրամ մաքսային վճարների 50 տոկոսի չափով՝ **1.768.505 ՀՀ** դրամ **(տուգանքն անհրաժեշտ է վճարել 900005024055 հաշվեհամարին (ՀՀ պետական բյուջե, կենտրոնական գանձապետարան, Հյուսիսային մաքսատուն-վարչություն, ԿՈԴ 28)**:
3. Որոշման մասին հայտնել Աշոտ Աբրամյանին:
4. ՀՀ մաքսային օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն որոշումն ուժի մեջ է մտնում այն կայացնելու պահից և համաձայն ՀՀ ՄՕ 222-րդ հոդվածի 2-րդ մասի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մաքսային մարմին (պաշտոնատար անձին) կայացնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ երկամսյա ժամկետում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ  ՀԱՅԿ ՄԻՐՋՈՅԱՆ